№ 104 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 10 1899 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 10 № 104

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակ է կազմակերպել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարձրագոյն հրաման. Մաժուլ. Մատենագրութիւն. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Դիլիջանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խաղաղութեան կոնֆէրէնցիան. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Մոսկվայից.

ԺԱՄԱՆԱԿ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ի՞նչ դրութեան մէջ է մեր երկիրը ներկայումս, ինչպէ՞ս են ցանքերը, որտե՞ղ են սկսվել հունձները և ի՞նչ բերք են տուել, արդեօ՞ք կունենանք բաւականաչափ հացի պաշար, թէ պէտք է կարօտութեան մէջ լինենք առաջիկայ աշնան և ձմեռը, ի՞նչ փոփոխութիւններ են կատարվում մեր գիւղական կեանքի շրջանում—ահա մի շարք կարևոր հարցեր, որոնք պատասխան են պահանջում: Այդ տեղեկութիւնները հարկաւոր են թէ իրան՝ ազգաբնակութեան համար, թէ վարչական շրջաններին և թէ զանազան հաստատութիւններին, օրինակ բանկերին, առևտրական տներին, քաղաքային ինքնավարութիւններին և այլն:

Պէտք է խոստովանել, որ գիւղատնտեսական ընթացիկ վիճակագրութիւնը գտնվում է Կովկասում ամենանաբաւարար վիճակի մէջ և մինչև այժմ մենք չունենք մի հեղինակաւոր աղբիւր, որից տեղեկանայինք մեր երկրի անտեսական կեանքի ընթացիկ երևոյթների մասին: Առանձին-առանձին փորձերը, որ արել են Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը և Թիֆլիսի օդերևոյթաբանական կայարանը, ցոյց են տալիս, որ առատ նիւթ կարելի է ժողովել մեր երկրում եթէ ոչ ճիշդ գիտական ուսումնասիրութիւնների, գոնէ գործնական նպատակների համար: Արդարև, եթէ ուժեղացնենք տեղեկութիւններ ժողովելու նոյն իսկ այն ձևը, որ մինչև այժմ գործադրվում է, մենք կարող ենք փոքր ի շատէ ուղիղ գաղափար կազմել տալվայ արդիւնաբերութեան մասին: Օրինակ, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը իր եղրակացութիւնների համար օգտվել է զանազան ժամանակներ հետևեալ աղբիւրներից. իր սեփական թղթակիցների հաղորդագրութիւններից, ֆիլօքսերայնի խմբերի պարբերական հաշիւներից, ընդհանուր մամուլի տուած տեղեկութիւններից, հողային բանկի ստացած զեկուցումներից, Թիֆլիսի օդերևոյթաբանական կայարանի բիւլլետէնից, երկրագործութեան մինիստրութեան հրատարակութիւններից և վարչական տեղեկագիրներից:

Այդպիսով մենք նկատում ենք, որ ընթացիկ վիճակագրութեան սկիզբը դնելու համար կան զանազան աղբիւրներ, որոնց նիւթերը կարելի է սիստեմական կերպով մշակել և ամբողջացնել, կամաց-կամաց լայնացնելով գործը, մինչև որ նա ստանայ կատարեալ կազմակերպութիւն:

Մենք յայտնել էինք «Մշակի» մէջ, որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ հերթական հարց է դարձել ընթացիկ վիճակագրութեան կազմակերպութիւնը: Մենք հաղորդել էինք նոյնպէս, որ վրաց ազնուականութեան բանկը իր կողմից յատկացրել է այդ գործի համար հազար ռուբլի իբրև սկզբնական փորձ, որի աջողութիւնից է կախված ապագայում աւելի ևս մեծ գումարով օգնութեան հասցնելը: Վաղը, ուրբաթ, յունիսի 10-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը պէտք է զբաղվի ընթացիկ վիճակագրութեան կազմակերպութեան հարցով: Ցանկալի է, որ մեր երկրի համար կարևոր նշանակութիւն ունեցող այդ հարցը վերջապէս սկսեր լուծում ստանալ և մտներ իրագործութեան շաւղի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ

Քաղաքային դումաների և լիազօրների ժողովների կազմակերպութեան կարգի վերաբերմամբ ժամանակաւոր կանոններ հաստատելու մասին Կովկասեան երկրի քաղաքներում.

Թաղաւոր Կայսրը, 1899 թվի մայիսի 15-ին, մինիստրների կոմիտէի որոշման համաձայն, Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝

Որպէս ժամանակաւոր միջոցներ, մինչև որ օրէնսդրական կարգով կը վերանայվեն քաղաքային դումաների և լիազօրների ժողովների կազմակերպութեան կարգի վերաբերեալ որոշումները Կովկասեան երկրի քաղաքներում, սահմանել հետևեալ կանոնները.

1) Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին իրաւունք է տրվում իր հայեցողութեամբ հեռացնել ընտրվելիների կազմից քաղաքային ձայնաւորներին կամ լիազօրներին:

2) Այն դէպքում, եթէ ձայնաւորներին հեռացնելուց և նրանց տեղ, կառավարչապետի կարգադրութեամբ, ձայնաւորների կամ լիազօրների կանդիդատներին նշանակելուց յետոյ կը յայտնվի, որ ձայնաւորների կամ լիազօրների թիւը պակաս է նրանց ընդհանուր օրինական թվի երրորդականից, այն ժամանակ այդ պակաս թիւը լրացվում է այն անձինքներով, որոնք ձայնաւորի կամ լիազօրի կոչում են ունեցել վերջին քառամեակի ընթացքում, աչքի առաջ ունենալով ոչ միայն ընտրութեան աւագութիւնը, բայց և ուրիշ հիմունքներ. երբ այդպիսի միջոցն էլ անբաւական կը լինի, կառավարչապետից է կախված նշանակել նոր կամ լրացուցիչ ընտրութիւններ:

3) Քաղաքագլուխների կամ աւանապետների պաշտօնները, երբ կառավարչապետը անհրաժեշտ կը համարի, կարող են փոխարինվել այն անձինքներով, որոնք ձայնի իրաւունք ունեն քաղաքային ընտրութիւնների մէջ, — և առանց ընտրութիւններ կատարելու այդ պաշտօնների համար,—նշանակելով նրանց՝ նահանգական և շրջանային քաղաքներում կառավարչապետի իշխանութեամբ, իսկ մնացած քաղաքներում—նահանգապետի կամ շրջանի հրամանատարի իշխանութեամբ:

4) Երբ անհրաժեշտութիւն է ներկայանում քաղաքային վարչութեան կազմից անյապաղ հեռացնել այնպիսի անձանց, որոնց գործունէութեան ուղղութիւնը հակասական կը համարվի պետական շահերին կամ ակնյայտնի կերպով անհամապատասխան հասարակական կարիքներին և օգուտներին, կառավարչապետին իրաւունք է տրվում գործադրել 1—3 կէտերով որոշված կանոնները քաղաքային հասարակական վարչութիւնների կազմի վերաբերմամբ, և չը սպասելով այս հիմնարկութիւնները մտնող անձանց լիազօրութիւնների լրանալուն:

ՄԱՄՈՒԼ

Անցեալներում, բերելով պրոֆէսօր Մօդեստովի մի յօդուածի բովանդակութիւնը, մենք առիթ ունեցանք բացատրելու թէ ինչից է որ Ռուսաստանում արևելագիտութիւնը չէ կանգնած ցանկալի բարձրութեան վրա: Մի և նոյն երևոյթի մասին, որ մատնացոյց էր արել Մօդեստով, խօսել է նաև երիտասարդ պրոֆէսօր Մառ իր այն ճառի մէջ, որ արտասանել է Պետերբուրգի համալսարանում, Վարդանի առակների մասին գրած իր դիսերտացիան պաշտպանելու ժամանակ: «Тифлисскій Листокъ» լրագրում տպված է այդ ճառի մի մասը և մենք բերում ենք նրա մի շատ հետաքրքրական կտորը:

Գոյութիւն ունեն և կողմնակի հիմքեր, որոնք ցանկալի են դարձնում հայագիտութեան և նրա հետ ազգակցութեամբ կապված արևելագիտութեան ճիւղի ծաղկումը մանաւանդ Ռուսաստանում: Ցաւալի է հաշվվել, օրինակ, այն բանի հետ, որ Վրաստանի և Հայաստանի հնութիւնները չեն գտնում լուրջ հետազօտողներ Ռուսաստանում. մի ամբողջ դարի ընթացքում, որը անցել է Վրաստանի և ապա բուն Հայաստանի մի նշանաւոր մասի Ռուսաստանին միացնելուց, Կովկասում, այն երկրում, որ ամբողջովին ծածկված է զանազան ժամանակների զանազանակերպ կուլտուրաների բեկորներով, հաստատ չը հիմնվեց ոչ մի ուսումնական ընկերութիւն, ոչ մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

XVI

Երկրորդ օր

Մայիսի 27-ը: Աղնուականների ժողովարանի հսկայական դահլիճը լի է հազարաւոր բազմութեամբ: Դահլիճի խորքում, դարևանդակի վրա դրված է Պուշկինի մեծ կիսարձանը՝ երկու կողմից զարդարված կանաչով ու ծաղիկներով: Դարևանդակի աջ կողմում նստած են ռուս դրասէրների ընկերութեան անդամները, իսկ ձախ կողմում—զանազան պատգամաւորութիւններ և պատուաւոր հիւրեր: Թէ այս և թէ հետևեալ օրվայ հանդէսը, որի մասին կը խօսեմ հետևեալ նամակում, կազմված են սոսկ ռուս դրասէրների ընկերութեան նախաձեռնութեամբ: Ժամի 2-ին ընկերութեան նախագահ պրոֆ. Ստօրօժենկո յայտարարում է հանդիսաւոր ժողովի բացումը: Ամբիոն է բարձրանում պրոֆ. Վեսելօվսկին և իրան յատուկ պերճախօսութեամբ համարեա մի ամբողջ ժամ լուսաբանում է մեծ բանաստեղծի անձնաւորութիւնը, նրա կեանքը, գրականական գործունէութիւնը: Նա խօսում է այն բազմաթիւ պէս-պէս կարծիքների ու հայեացքների մասին, որոնց մինչև օրս ենթարկված է թէ Պուշկինի պօէզիան և թէ նրա անձնաւորութիւնը: Խօսում է նաև բանաստեղծի քարոզած մտքերի, գաղափարների, ոգևորութեան այն հակասութիւնների մասին, որոնք շատ յաճախ պատահում են Պուշկինի ստեղծագործութիւններում և, մանաւանդ, նամակներում: Ճառախօսն ընտրելով բանաստեղծի վերջին երկերից մինը—նրա նշանաւոր և ընտրոյ «Я памятникъ себѣ воздвигъ нерукотворный» բանաստեղծութիւնը և համեմատելով այն Հորացիոի ու Դերժավինի համանուն բանաստեղծութիւնների հետ, խորին հմտութեամբ պարզաբանում է այն հայեացքը, որով ինքը Պուշկինն էր նայում իր կոչման և պօէզիայի վրա: Բանաստեղծն իր մեծութիւնն ու անմահութիւնը գտնում էր նրանում, որ «ժողովրդի մէջ բարի զգացումներ էր զարթեցնում քնարով», որ «դաժան օրերում ազատութիւն էր փառաբանում և ողորմածութիւն էր աղերսում անկեալների համար»: Դահլիճն երկարատև ծափահարութիւններով վարձատրում է պրոֆէսօր Վեսելօվսկուն: 10 րոպէ ընդմիջումից յետոյ, ամբիոնի վրա յայտնվում է ռուս դրականագէտ Եակուշկին, որ գրականութեան մէջ յայտնի է, որպէս հրմուտ բանահաւաք (կօմպիլիատօր), և կարդում է իր բաւականին հետաքրքրական ճառը: Ճառի նիւթն է՝ «Պուշկինի հասարակական հայեացքները»: Ճառախօսն ընդարձակօրէն նկարագրում է հասարակական կեանքի այն միջավայրը, որի մէջ ապրելիս է եղել Պուշկինը. վառ գոյներով պատկերացնում է 20-ական թուականների այն նշանաւոր գործիչներին, որոնց հետ չփվել է բանաստեղծը, մասնակից ու հակառող է հանդիսացել նրանց հասարակական հայեացքներին ու գաղափարներին:

Պուշկինը միշտ հաւատարիմ է մնացել հասարակական բարձր իդէալներին: Նա ջերմ պաշտպան է հանդիսացել լուսաւորութիւն տարածելու վեհ գաղափարին—տարածելու ամենալայն ու ազատ ճանապարհներով: Նա կռուել է մամուլի ազատութեան համար: Անընկճելի եռանդով, աներկիւղ ոյժով նա միշտ ձգտել է մտքի ազատ արտայայտութեան, ազնիւ հրապարակախօսութեան:

«На поприще ума нельзя намъ отступать.!» գոչում է բանաստեղծը: Ազնիւ ու անվեհեր պուբլիցիստական Պուշկինը միշտ համարել է անհրաժեշտ պայման հասարակական կեանքի կանոնաւորութեան: Ճառախօս Եակուշկին վարձատրվեց աղմկալի ծափահարութիւններով: Հերթը հասաւ պատգամաւորութիւնների և ուղերձների երկար շարքին, որոնց հասարակութիւնը շարունակ ծափահարում էր—մէկին՝ սաստիկ, միւսին՝ թոյլ: Ընդհանուր ոգևորութեամբ և սրտագին ցոյցերով վարձատրվեց յայտնի գրականագէտ—մանկավարժ Ծերունի Օստրոգորսկին, երբ դուրս եկաւ բանաստեղծի կիսարձանի առաջ և ուղերձ կարդաց իր խմբագրած «Міръ Божій» համակրելի ամսագրի կողմից: Նա Պետերբուրգից հիւր էր եկել յատկապէս Պուշկինի տօներին ներկայ գտնվելու համար: Ծերունի մանկավարժը տօներից մի քանի օր առաջ տեղական «Русскія Вѣдомости» լրագրում զետեղեց «Пушкинская копейка» խորագրով մի զգացված յօդուած, որի մէջ այն գեղեցիկ միտքն էր յայտնում, որ մեծ բանաստեղծի յիշատակը և՛ սիրելու, և՛ սրբացնելու ամենալաւ ապացոյցն այն կը լինի, եթէ ռուս հասարակութիւնը յանուն Պուշկինի նպաստէ ժողովրդի, մասսայի լուսաւորութեան: Նա առաջարկում էր լայնատարած Ռուսաստանում սկիզբ դնել մի բարեյօժար հանդանակութեան, հիմնել մի բարեյօժար տուրքի գանձանակ, որ շարունակվի յաւիտեանս յաւիտենից, ծառայի սոսկ ժողովրդական լուսաւորութեան գործին և կրէ «Պուշկինի կօպէկ» անունը: Երբ Օստրոգորսկին վերջացրեց իր սրտառուչ ուղերձի ընթերցումը, դահլիճը նորից թնդաց ծափահարութիւններով: Շատերը յիշեալ յօդուածի ազդեցութեան տակ՝ գոչում էին. «Право автору «Пушкинской копейки»! Մոսկվայի ռուսաց մամուլը բաժանված երկու խմբի՝ երկու ուղերձով ներկայացաւ այդ հանդիսին: Առաջին խմբին գլուխ էր անցած «Московскія Вѣдомости»-ն, երկրորդ խմբին—«Русскія Вѣдомости»-ն: Շատ ընտրոյ և խրատական էր հասարակութեան վերաբերմունքը դէպի այդ ուղերձները: Տիրահռչակ Գրինդմուտի (Կատկովի օրգանի այժմեան խմբագիր) յայտնվելը, դերասանական ոգևորութեամբ ուղերձ կարդալը, բանաստեղծին գրուատելն ու երկրպագելը—այդ բոլորը չունեցաւ այն ազդեցութիւնը, որ երազում էր Կատկովի օրգանը և նրան յարած խումբը: Այդ ներքոյի ընթերցանութեան ժամանակ իսկ առաջ կենդանացան Պուշկինին ժամանակակից և նրան անխնայ հալածող Բուլգարինների և Կաչենովսկիների խմբակը, որոնց բանաստեղծը կոչում էր «գրականական ղեռուններ»: Եթէ բանաստեղծը կենդանի լինէր, անշուշտ և՛ այսօր քիչ չէին լինի նրան հալածող «գրականական ղեռունները», նեղսիրտ չովինիստները—մտածում էի ես: Հատրակութիւնն աւելի քան թոյլ ու աննշան ծափահարութիւններով դնահատեց այդ ներքոյը: Իսկ երբ պրոֆէսօր Զուպրով կարդաց «Русскія Вѣдомости» և միւս օրգանների հաւաքական ուղերձը, մեհամուռ ծափահարութիւններով դըղրդաց դահլիճը:

Մեծ բանաստեղծի յիշատակին նուիրված այդ գրականական տօնախմբութիւնը վերջացաւ ժամը 5-ին և հազարաւոր բազմութիւնը ցրվեց հոգեպէս թարմացած ու պարարված:

Երեկոյեան նոյն դահլիճում ի յիշատակ բանաստեղծի ծննդեան հարիւրամեակի նշանակված էր գրականական-երաժշտական երեկոյթ տոմսակներով, որ նոյնպէս բազմամարդ էր և շատ աջող անցաւ:

Ալ. Ծատուրեան

ուսումնական օրգան տեղային հնագիտութեան կամ հին գրականութեան կամ հին պատմութեան, և ամբողջ Կովկասում մինչև այժմ իրապէս չը կայ հնութիւնների մուզէօն։ Բոլորովին անմխիթարական երևոյթ է, որ Կովկասեան հնագրութեան վերաբերեալ լաւագոյն աշխատութիւնները պատկանում են ֆրանսիացի և գերմանացի գիտնականներին, հայոց լեզուագիտութեան վերաբերեալ ամենից շատ գնահատելի աշխատութիւնները հրատարակել են գերմանական և ֆրանսիական պրոֆէսորները, Հայաստանի պատմութիւնը և գրականութիւնը ամենից շատ հեղինակաւոր գնահատողներ գտան ոչ միայն բանասիրութեան կլասիքական հայրենիքում, այլ և Ֆրանսիայում, Անգլիայում և Իտալիայում։ Նոյն իսկ հայոց լեզուի և գրականութեան վերաբերեալ տարրական դասագրքերը տալիս են մեզ օտարերկրացիները, մինչդեռ մենք մեզ վերաբերվող այս գիտութեան մէջ անգործ ենք անտարբերութեան պատճառով և միայն մամուլի մէջ ջանք ենք թափում «գիտութեան» անունով ջերմապէս հաստատել մեր մեծամիտ վարմունքը դէպի այն, ինչ մեզ անծանօթ է։

Ապա, ցոյց տալով թէ ռուսաց պետութիւնը որքան շահ ունի իր հպատակ ազգերի անցեալը ճանաչելու մէջ, որքան էլ փոքրիկ լինեն այդ ազգերը, յիշատակելով նմանապէս որ Վրաստանի և Հայաստանի անցեալի ուսումնասիրութիւնը լոյս կը սփռէ և ռուսաց անցեալի վրա, քանի որ հին Ռուսաստանն էլ շատ բան է վերցրել բիւզանդական և արևելեան ազդեցութիւններից, պրոֆէսօր Մառ ասաց, որ ռուսական արևելագիտութեան պատիւը պահանջում է, որ նրան պատկանէ ղեկավարող դերը գտնէ Արևելքի այն տեղերի ուսումնասիրութեան մէջ, որոնք կազմում են Ռուսաստանի մասերը։

Ես աւելին կասեմ, թէև երկիւղ կրելով, որ իմ խօսքերի մէջ կը տեսնեն մի մասնագէտի ոգևորութիւնը։ Մանաւորապէս հայերի և վրացիների համար՝ պետութիւնը հիմք ունի մի գեղեցիկ կրթական միջոց տեսնելու հայագիտութեան և վրացագիտութեան մէջ, որովհետև անվիճելի է, որ դրանցով կարելի է զարգացնել և ամրացնել մի լուսաւոր սէր և յարգանք դէպի մայր հայրենիքը. իսկ հազիւ թէ մէկը վիճելի համարէ այն՝ ինձ համար աքսիօմա դարձած միտքը, թէ ով որ անտարբեր է դէպի իր մայրենի երկրի ճակատագիրը, նա չէ կարող խորապէս արմատացնել իր մէջ աւելի վերացական, աւելի բարդ զգացումները դէպի ընդհանուր հայրենիքը։ Ում մէջ ճնշված կամ խլացրված է բնածին սէրը դէպի մայրենի հնութիւնները և մայրենի աւանդութիւնները, ում մէջ այդ սրբազան զգացումները բնական զարգացում չեն ստացել ընտանիքում կամ դպրոցում, այդպիսիները չը պիտի զարմացնեն մեզ, երբ հասարակութեան մէջ տիրող կենսական նիւթապաշտական հայեացքներ են տիրապետում և այդպիսիները հոգևոր կարիքներ չեն զգում ու առհասարակ անտարբեր են դէպի հումանիստական պարապմունքները։ Ինչ սիստեմով էլ կրթենք բնաւորութիւնը, լուսաւորող գիտութիւնների ինչ իդէալական հաւաքմամբ էլ զարգացնենք խելքը,—մայրենի կուլտուրական անցեալից արհեստական կերպով անջատումը անխուսափելի տանում է ահագին մեծամասնութիւնը դէպի հոգևոր այլասերում, ներքին վայրենացում։ Զը զարթեցնելով գիտական հետաքրքրութիւն դէպի այն, ինչ սրտին մօտիկ է, մենք դրանով բթացնում ենք ինքնագործունէութեան ամենաազնիւ դրդիչը» արմատախիլ ենք անում անկեղծ, գիտակցական համակրութիւնները դէպի մեր լայնատարած հայրենիքի վիթխարի պատմական խնդիրները և ամբողջ ազգութիւնները այդ խնդիրներին հաղորդակից անելու արդասաւոր գործը։

Ցարգելի գիտնականի այս մտքերը տարիների ընթացքում «Մշակի» դատանանքների հիմքն են կազմել։ Մեզ համար էլ միշտ ցանկալի է եղել, որ մեր երկիրը ուսումնասիրվի լուրջ և անկողմնակալ գիտնականների ձեռքով, որ կովկասեան ազգութիւնների անցեալը, ներկան որքան կարելի է լաւ պարզվի ռուս գիտնականների, ռուս հասարակութեան առաջ։ Պրոֆէսօր Մառ, որ յանձն է առել այդ դժուար գործի մի մասնագիտական ճիւղը, ուսումնասիրելով հայերի և վրացիների անցեալը, արդէն այնքան շօշափելի օգուտներ է մատուցել գիտութեան, որ մեզ կը մնայ ամբողջ սրտից ցանկալ, որ նա շատ հետևողներ ունենայ Ռուսաստանի մէջ։

*

Երէկ մենք խօսեցինք այն սոսկալի ժահացութեան մասին, որին զոհ են գնում երեխաները Բագուում։ Այդպիսի դժբախտութիւնների դէմ կուռել, ի հարկէ, կարելի է. բայց կուռողները, անշուշտ, պիտի լինեն ոչ թէ ասիական ծուլութեան և անտարբերութեան մէջ խրված համայնքները, որոնք դեռ այն հին մոլորութեան մէջն են թէ ճակատագիրն է ամեն ինչ տնօրինում և նրա դէմ գնալ չէ կարելի։ Այդ սպանիչ անմտութիւնը փարատելու համար պէտք է մեծ ուշադրութեամբ ականջ դնել այն մարդկանց, որոնք շատ լաւ գիտեն, որ մարդկային խայլ այժերին վերապահված է մի անընկճելի կարողութիւն կուռելու բնութեան դէմ և այդ կռուի միջոցով երջանկութիւն և առողջութիւն ձեռք բերելու։ Ամառը մեր Անդրկովկասեան շատ քաղաքներում (Երևան, Թիֆլիս, Գանձակ, Բագու) դժոխային տօթեր են լինում, որոնք, ինչ կասկած, աւելի զարհուրելի ներգործութիւն անում են երեխաների, մանաւանդ թուլակազմ, հիւանդոտ երեխաների վրա։ «С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ ժողովրդական առողջութիւնը պահպանելու ռուսաց ընկերութիւնը ամառ ժամանակ մի շարք ամառնային կօլոնիաներ է հիմնում աղքատ երեխաների համար. նրանք, որոնք միջոց չունեն նշանակած վարձը տալու, ընդունվում են ձրի։ Այդ հիմնարկութիւնները

Նպատակ ունեն տալ անբաւարար միջոցների տէր ծնողներին հնարաւորութիւն մի փոքրիկ վարձով, իսկ բոլորովին չքաւորներին ձրի կերպով ամառվայ ժամանակ դնել իրանց թոյլ և հիւանդոտ երեխաներին կեանքի լաւագոյն պայմանների մէջ, որպէս զի կարելի լինի այդ երեխաներին մշտական բժշկական օգնութիւն հասցնել, հանքային ջրերով, վանաներով, պատշաճաւոր մնունդով և բնակարանով, առողջ օդով և ուրիշ յարմարութիւններով կազդուրել, բժշկել։

Մանրամասնութիւնների մէջ մտնելը աւելորդ է, գլխաւորը նպատակն է, իսկ նպատակը, ինչպէս տեսնում ենք, վերին աստիճանի համակրելի, մարդասիրական է։ Կը հասնենք մենք էլ այդպիսի մի գեղեցիկ ժեծագործութեան։ Թող սրա վրա մտածեն այն մարդիկ (եթէ կան), որոնց համար մի դատարկ ձայն չէ Բագուում կոտրվող երեխաների ահագին քանակութիւնը...

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«ԳԼԱԴՍՏՕՆ» — Լէօի, Հրատարակութիւն Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան, Թիֆլիս 1899 թ., 279 երես, գինը 80 կոպէկ։

Զը կայ մի ուրիշ եւրօպական անուն, որ այնքան մօտ լինի հայի սրտին, որքան Գլադստոնի անունը, և Հրատարակչական ընկերութիւնը, ցանկանալով հետաքրքիր և օգտակար գիրք տալ մեր ընթերցող հասարակութեան, չէր կարող աւելի լաւ նիւթ ընտրել՝ քան կենսագրութիւնը ամենամեծ և ամենաանկեղծ հայասէրի, որի յիշատակը նուիրական պէտք է լինի ամեն մի հայի համար։

Իսկապէս՝ ամօթաբեր երևոյթ էր մեզ համար, որ մենք մինչև այժմ բաւականանում էինք միայն լրագրական կցկտուր տեղեկութիւններով Գլադստոնի մասին, և պէտք է յուսալ, որ մեր հասարակութիւնը կը շտապի ծանօթանալ պ. Լէօի գրքի հետ, որ աչքի է ընկնում ոչ միայն հեղինակին միշտ յատուկ համակրելի գաղափարականութեամբ, անկեղծ ոգևորութեամբ և գրաւիչ ու հանրամատչելի ոճով, այլ և նիւթի արտասովոր, թերևս նոյն իսկ չափազանց լրութեամբ։

Եւ իրաւ, պ. Լէօի գիրքը պարունակում է իր մէջ ոչ միայն Գլադստոնի կեանքը, այլ և Անգլիայի վերջին դարի հասարակական պատմութիւնը, թէև համառօտակի, բայց դարձեալ աւելի մեծ չափով, քան այդ ընդունված է այդ տեսակ գրքերում։

Սակայն, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր հասարակութեան անծանօթ է այդ պատմութիւնը, մենք ոչ միայն աւելորդ ենք համարում յանդիմանել պ. Լէօին դրա համար, այլ նոյն իսկ մեր պարտաւորութիւնն ենք կարծում, իբրև ընթերցող, շնորհակալութիւն յայտնել նրան այն էջերի համար, որ նա նուիրել է զանազան հասարակական հարցերի պատմութեան, մանաւանդ այն գեղեցիկ հատուածների համար, որոնք վերաբերում են իրլանդական դատի ողբերգական յեղյեղումներին։

Կարելի էր, ի հարկէ, ցանկալ, որ այդ հարցերը ծնող հիմնական պատճառները աւելի որոշ լուսաբանված լինէին, քան այդ հարկաւոր է համարել անել հեղինակը։ Բացի այդ, անհրաժեշտ էր աւելի տեղ տալ Գլադստոնի մասնաւոր կեանքին, որին գրքի յետին անկիւնում նըվիրված է միայն եօթ երես, այն էլ կազմված անեկդոտական դէպքերի թուարկութիւնից, այնպէս որ պ. Լէօի գրքի ընթերցողը հիմնաւորապէս ծանօթանալով Գլադստոնի հասարակական գործունէութեան հետ, չէ կարողանում սակայն կոնկրէտ կերպով ճանաչել նրա հոգեբանութիւնը իր թագուն զսպանակներով, նրա բարոյական կերպարանքը իր կենդանի գծերով, նրա «եսը» իր զգալու, մտածելու և կամենալու բնորոշ յատկութիւններով։ Ուրիշ խօսքով, այդ կենսագրութիւնը կարդալուց յետոյ՝ Գլադստոնը չէ դառնում ընթերցողի մտերիմը, մանաւոր ծանօթը։

Գոնէ այդպէս է մեր տպաւորութիւնը։ Սակայն գեղարուեստագէտ հեղինակը հեշտութեամբ կարող է լրացնել այդ պակասը, որ կորչում է գրքի բազմաթիւ առաւելութիւնների մէջ, երկրորդ տպագրութեան միջոցին, որ, յոյս ունենք, մեզ երկար սպասեցնել չի տայ։

Տ. Ց.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ

—

Յունիսի 2-ին

Լայնածաւալ Ռուսաստանում բացառիկ երևոյթ կազմող Պուշկինեան տօնախմբութիւնը տօնվեց և Աղէքսանդրօպօլում։ Ռուսաստանի այս հեռու և զարգացման տեսակէտից շատ յետ մնացած անկիւնում, ռուս ազգի ամենասիրելի բանաստեղծի յօբելեանի տօնը չէր կարող ընդհանրացած լինել և բուն ժողովրդի մէջ, ուստի և տօնի կատարումը մնաց սեփականութիւն բուն ինտելիգէնտ դասակարգին և ուսումնարանական մարմիններին։ Այդ օրը, ցերեկը, յունաց եկեղեցում տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ, որից յետոյ կատարվեց մեծ բանաստեղծի հոգեհանգիստը, քաղաքագլխի, ուսլրավայի անդամների և բազմաթիւ հայ և ռուս ինտելիգենցիայի ներկայութեամբ։ Երեկոյեան տեղի ունեցաւ գաւառական դպրոցի կազմակերպած գրականական երեկոյթը։ Ծրագիրը հետաքրքիր էր. երեկոյթը կայացաւ կլուբի ամարային դահլիճում, բազմաթիւ հասարակութեան, պրոգիմնազիայի և գաւառական դպրոցի աշակերտների ներկայութեամբ։

Գեղեցիկ լուսաւորված դահլիճում, բեմի առջև դրված էր մի մեծ քնար, որի վրա ոսկէ տառերով գրված էր բանաստեղծի յայտնի ոտանաւորի հետևեալ խօսքերը «Я памятникъ себѣ воздвигъ нерукотворный, къ нему не заростетъ народная тропа»։ Իսկ քնարի գլխին դրված էր բանաստեղծի մեծադիր պատկերը, զարդարված դափնեայ տերևներով և ծաղիկներով։ Երեկոյթն սկսվեց գաւառական դպրոցի տեսուչ Կազանցեվի ոգևորված ու գեղեցիկ ճառով, որի նիւթն էր բանաստեղծութիւնը և Պուշկինի նշանակութիւնը ռուսաց գրականութեան համար։ Պ. Կազանցեվի ճառը շատ հարցեր յօշափեց, շատ մտքեր յիշեցրեց—անսիրտ կեանքը, աշխարհի տաղանդաւոր և միևնոյն ժամանակ դժբաղդ զաւակների պատմութիւնը։ Նրա ճառը, ընդհանրապէս վերցրած, յիշեցնում էր անմահ Բեօրնէի խօսքերը՝ «Մեր սրտի ամեն մի նոր զարկը մեզ մի նոր վէրք է տալիս, և մարդու սրտից յաւիտեան արիւն կը գնար, եթէ բանաստեղծութիւնը չը լինէր»։ Պ. Կազանցեվը յիշեց այն անգնահատելի ծառայութիւնները, որ մատուցել է Պուշկին ռուսաց գրականութեանը, հետևաբար և մինչև մեր դարի սկիզբները լուսաւոր աշխարհին անյայտ մնացած ռուս ժողովրդին։ Ճառը վերջացաւ երկար ծափահարութիւնների և կեցցէների որոտով։ Ճառից յետոյ սկսվեցին երգեր ու ոտանաւորներ, որոնք հատարեա բոլորն էլ Պուշկինի հեղինակութիւններն էին։ Ապա դպրոցի աշակերտները խաղացին «Полтава» պօէմայից «Допросъ Кочубея» կտորը և «Скупой рыцарь» ամբողջապէս։ Նրանց խաղը, փոքրիկ բացառութեամբ գեղեցիկ էր։ Աշակերտներ՝ Ա. Զալալեան, Գեղամեան, Վ. Մանուկեան և Հայրբաբամեան գեղեցիկ տպաւորութիւն թողին և վարձատրվեցին ծափահարութիւններով։ Ոտանաւոր ասողների մէջ ուշադրութիւն դրաւեց մի երեխայ՝ Ծլատեան աղջանտնով։ Երգերը անցնում էին բաւարար կերպով։ Երեկոյթը վերջացաւ ռուսաց ազգային հիմնով, որ աջող կերպով երգեց խումբը։

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԴԻԼԻՋԱՆԻՑ

—

Յունիսի 5-ին

Մայիսի 3-ին Դիլիջանի հայ հասարակութիւնը բաղդ ունեցաւ վերջապէս տեսնելու իր համար նոր կառուցվող եկեղեցու հիմքի օրհնութիւնը, որը կատարեց, մեր թեմի առաջնորդի կարգադրութեամբ, գործակալը՝ մի քանի շրջակայ գիւղերի քահանաների մասնակցութեամբ։ Եղանակը անձրևային լինելու պատճառով հանդէսին մեծ բազմութիւն չը կար։ Առաջուց ցուցակով հրաւիրված էին 16 մարդիկ, որպէս կնքահայրեր. հանդէսի ժամանակ իւրաքանչիւրը բռնած էր մի մի փոքրիկ քար, որոնք օծվեցին քահանայի ձեռքով և դրվեցին հիմքի մէջ։

Պատարագի ժամանակ, Քարվանսարայ գիւղի քահանան, տէր-Կոմիտաս, մի լաւ իմաստալից քարոզ խօսեց, բացատրելով ժողովրդին եկեղեցու նշանակութիւնը և ժողովրդի պարտականութիւնը դէպի իրանց եկեղեցին։

Այս եկեղեցին, ինչպէս յայտնի է, կառուցանում է դիլիջանցիների համար բագուեցի տիկին Եւա Տէր-Յակովբեանց՝ ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Աբել Տէր-Յակովբեանցի, որի ժարմինը թաղված է այս եկեղեցու գաւթում։ Դիլիջանցիները, յարգելի տիկնոջ շնորհիւ, կունենան մի հոյակապ եկեղեցի, որից մինչև հիմա զուրկ էին։ Հին, խարխուլ եկեղեցում ժամասացութիւնը արգելվելուց յետոյ՝ մինչև այժմ ժամասացութիւնը կատարվում է նախկին եկեղեցուց դպրոցի շինութեան մէջ։ Գիւղացիներն էլ յանձն են առել, իրանց ոյժերի համեմատ, օգնել եկեղեցի շինելուն, տալով քարը հիմքի համար և ամբողջ շինութեան համար պահանջված աւազը։ Եկեղեցու շինութիւնը յանձնված է պ. Ա. Զաղինեանցին։

Դիլիջանի հասարակութեան կողմից ճաշ էր պատրաստված դպրոցի դահլիճում։ Ճաշկերոյթի ժամանակ մի քանի անգամ խմվեց յարգելի տիկնոջ կենացը և հասարակութեան կողմից հեռագիր ուղարկվեց Բագու՝ տիկնոջը, յայտնելով խորին շնորհակալութիւն այդ բարերարութեան համար։

Այստեղ ամարանոց եկողների թիւը այս տարի սովորականից շատ կը լինի, տները համարեա բոլորը վարձված են։ Եղանակը հրաշալի է, ժամանակ առ ժամանակ անձրևում է, արտերը լաւ դրութեան մէջ են. եթէ ուրիշ պատուհասներից Աստուած պահի, այս տարի գիւղացին առատ հունձ կունենայ։

Հ. Խազ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՄՆ

—

Ալէշկի, յունիսի 1-ին

«Մշակի» № 93-ի մէջ Զանգեզուր գաւառի Արծուանիկ գիւղից գրած մի թղթակցութիւնը ասում է. «Աշխատող ձեռքեր մեր գիւղում օր օրի վրա պակասում են։ Նաւթահանքերը վիթխարի մագնիսի նման արագութեամբ քաշում տանում են դէպի իրանց մինչև անգամ երեխաներին. թէ ինչ վախճան կունենայ պանդխտութեան դիմողների այս տենդը, հաստատապէս չենք կարողանում ասել։ Իրողութիւնը միայն այն է, որ հողերը մնալով անմշակ, արագացնում են երկրի տնտեսական քայքայումը։ Այս հանգամանքի մէջ պիտի որոնենք անբերրիութեան մի քանի պայմանները»։

Յօդուածագրի այս եզրակացութիւնը մենք առնուազն համարում ենք lapsus lingue (լեզուից թռած)։ Յայտնի է, որ ամենուրեք միայն տնտեսական պատճառներն են առաջացնում մշանջենաւոր կամ ժամանակաւոր գաղթականութիւն (մի կողմն ենք թողնում կրօնական, քաղաքական պատճառներից առաջացածները)։ Ո՛չ մի նստակեաց, հողագործ ժողովրդի մէջ չը կայ անդուսպ սէր դէպի գաղթականութիւն (յիշեցէք «զարիբի սիրուն է խոց, ջիգարն...»), ոչ մի տնտեսագէտ այդ չի ասի։ Գաղթողը, վերցնելով պանդխտութեան գաւազանը, հեռանում է և տանը մընում են ճիշդ այնքան հոգի, որոնք կարող են կերակրվել հողից. հետևաբար քիչ շատ բերրի հողեր անմշակ մնալ չեն կարող՝ մի երկրագործ ժողովրդի մէջ։ Ով լեռնային տեղերում տեսել է հայ գիւղացու հերոսական ջանքերը լերկ ապառաժները ագարակ դարձնելու համար, նա չի ասի, որ այդ գիւղացին հող չէ սիրում, կը թողնի նրան անմշակ։ Ո՛չ պակաս սիրով է վերաբերվում դէպի հողը և դաշտային մասում ապրող հայը. կարդայէք անմոռանալի հրապարակախօսի Արարատեան երկրից գրած թղթակցութիւնները...

Կան և՝ մեր երկրում հողեր, որոնց մշակութիւնը չեն ծածկում նրանց վրա բեռնած տուրքերը։ Դժբաղդաբար, մենք երևի չենք էլ տեսնի Ю. Янсонъ-ի «Опытъ статист. изслѣдованія о крестьянскихъ надѣлахъ и платежахъ» հետազօտութեան նման գրուածք, որ ասածս շօշափելի լինի։ Բայց և օտարութեան մէջ հազար ու մի դրկանքով վաստակած կօպէկները դիւղացին դարձնում է իր սիրած հողին՝ տաւար ձեռք բերելով, այգի դցելով և այլն։

Եւ յետոյ, որ բնագիտական օրէնքով անմշակ հողը առաջ կը բերի անբերրիութիւն՝ չենք ասում թանգութիւն։

Ցանկալի է, որ մեր այն սակաւաթիւ կարող ոյժերը, որոնց նաւթահանքերի վիթխարի մագնիսը չէ քաշել դէպի իրան, շրջահայեաց լինեն իրանց այն ուսումնասիրութիւնների մէջ, որոնք վերաբերվում են տեղական կեանքի երեւոյթներին։

Պետրոս Զաքարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հայագէտ Ն. Մառ, որ ներկայումս գտնվում է Թիֆլիսում, զբաղված է վրաց եկեղեցական հնադարանի ուսումնասիրութեամբ։ Այդ հնադարանում նա որոնում է նոր նիւթեր՝ լրացնելու այն ուսումնասիրութիւնը, որին նա ձեռնարկել էր անցեալ տարի Աթոնի վանքի ձեռագիրները քննելու ժամանակ։ Այդ աշխատանքը վերջացնելուց յետոյ նա կուղևորվի Գուրիա, ապա վերադառնալով Թիֆլիս, կուղևորվի Էջմիածին, որի գրադարանում նա մտադիր

է շարունակել իր սկսած հետազօտութիւնները: Էջմիածնից յետոյ նա ցանկութիւն ունի մի քանի հնագիտական պեղումներ կատարել Դուինի աւերակների տեղում:

—

«Մշակի» խմբագրութիւնը խնդրում է իր այն բաժանորդներին, որոնք մաս-մաս են վճարում «Մշակի» բաժանորդագինը, չտապեն ուղարկելու երկրորդ կիսամեակի վճարը, որպէս զի չը դադարեցնենք լրագրի ուղարկելը:

—

Մեզ հաղորդում են, որ արևելագէտ դոկտոր Անդրէաս, որ մի շարք տարիներից ի վեր պարապում է հին Պարսկաստանի և նրան կից երկիրների լեզուների ուսումնասիրութեամբ, նշանաւոր հետևանքների է հասել պեհլաւական լեզուի վերաբերութեամբ՝ ստացնելով թէ լեզուի կազմութեան և թէ արտասանութեան վիճելի հարցերում նոր տեսակէտներ:

—

Հայ դերասանական մի մեծ խումբ այս օրերս ուղևորվեց Շուշի, ուր ամառը մի շարք ներկայացումներ պիտի տայ: Խմբի ղեկավարն է պ. Պետրոսեան: Շուշեցիները առիթ կունենան տեսնելու մի նոր բեմական ոյժ, որ օր. Մխիթարեանցն է. նա նոր է վերադարձել Պետերբուրգից, ուր ուսումնասիրում էր բեմական արուեստը: Խմբին մասնակցում են՝ տ.տ. Զաբէլ, Մէլիքեան, պ.պ. Աղայեան, Արաքսեան, Վրոյր, Յարութիւնեան, Ստեփանեան, Զմշկեան, Մէլիք-Յովսէփեան, Ղազարեան: Կը ներկայացվեն նոր պիեսներ: Մի խօսքով, պ. Պետրոսեան ոչինչ չէ խնայել, ու շուշեցիները ունենան մի բարեկարգ թատրոն ամառվայ ընթացքում: Անշուշտ այդ հանդամանքը արժանի գնահատութիւն կը գտնէ հասարակութեան կողմից:

—

Թիֆլիսից Բագուից, Բալախանիից և Լեռաքիից մեզ դիմել են մի խումբ երիտասարդներ, խնդրելով հաղորդել նրանց աւելի մանրամասն տեղեկութիւններ էլեքտրոտեխնիկական այն դպրոցի մասին, որ նկարագրված էր մեր լրագրի Օդեսայի թղթակցութեան մէջ: Մենք խնդրում ենք յօդուածի հեղինակին յայտնել մեզ իր հասցէն, որպէս զի ցանկացողները կարողանային իրանց հետաքրքրող հարցերի մասին դրագրութեան մէջ մտնել անմիջապէս հեղինակի հետ:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հրաւիրել է բոլոր համալսարանների ռեկտորներին՝ խորհրդակցելու նրանց հետ համալսարանական կեանքի նշանաւոր հարցերի մասին: Նիստերը կը սկսվեն յունիսի 8-ին ժողովրդական լուսաւորութեան մինիստր Ն. Բոգոլէպովի նախագահութեամբ:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 29-ին Ղըրխ-Բուլաղի գիւղերի վրա տեղաց սարսափելի կարկուտ. վնասվել են Թաղա-Գիւղ, Գեօհ-Քիլիսա, ժանաւանդ Ելդոման և Բաշ գիւղերը. վնասը հասնում է 70—80,000 ռուբլու: Հարկային տեսուչը գնաց վնասված տեղերը վնասները հաշուելու: Յորենը էժանանում է: Խաղվարը ծախվում է 27—28 ռ., կարմիր տեսակը:»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Շուշու բէալական դպրոցը այս տարի աւարտեցին հետևեալ անձինք.—Համբարձումեանց Սարգիս, Բէզդաղեանց Աղէքսանդր, Կեանջեցեանց Միքայէլ, Գրիգորեանց Ճհանկիր, Մելիք-Աղամիրեանց Ներսէս, Մելիք-Ասլանով Խուդադատ (Թուրք), Մելիք-Յովսէփեանց Յովհաննէս, Մելիք-Շահնազարեանց Զումշուդ, Սարգսեանց Երուանդ, Փիրումեանց Նիկողայոս, Խաչէնկո Ալէքսանդր (ռուս), Յաստրեանց Իսահակ, Զերվինսկի Կոնստանդին (լեհացի), Եարամիշեանց Խաչատուր: Իսկ վեցերորդ դասարանը աւարտեցին՝ Աղամալեանց Գաբրիէլ, Բաղամեանց Արտաշէս, Վարունց Միքայէլ, Դանիէլբէգեանց Իսահակ, Զեւարլինսկի Մէհտի (Թուրք), Իսագուլեանց Յակով, Կարցևաղէղ Իլիա (վրացի), Կասպարեանց Ղևոնդ, Լէնբօրանսկի Իսմայիլ (Թուրք), Մելիք-Շահնազարեանց Աբրահամ, Մելիք-Շահնազարեանց Արմենակ, Մելիք-Շահնազարեանց Տիգրան, Տեգերեանց Հայկ, Բաղատրիդին Պաւէլ (ռուս), Սարգսեանց Արտաշէս, Խաչատրեանց Արսէն, Խաչատրեանց Լևոն, Խունունց Գրիգոր»:

—

ՍԱՆԱՀԻՆ գիւղից (Թիֆլիսի գաւառ) մեզ գրում են. «Կարծես բնութիւնը վճռել է միշտ պատժելու խեղճ գիւղացիներիս: Երկար երաշտութիւնից յետոյ՝ հազիւ էինք ուրախացել վերջին շաբաթներին եկած անձրևի պատճառով, և ահա անցեալ օրը մի չը տեսնված կարկտախառն հեղեղ տեղաց և մեր ուրախութիւնը սգի փոխեց: Մեր գիւղի լեռնային մասի բոլոր ցանքսերը հատարեա թէ ոչնչացան: Անասունների էլ կորուստ ունեցանք: Հէնց որ տաւարածները նկատում են, որ երկինքը ամպել է և անձրև պիտի գայ, տաւարը քշում են դէպի «Ջրաղացի» Ջուր կոչված տեղը, որպէս զի այդտեղի մեծամեծ ծառերի տակ անձրևից պահվեն. յանկարծ սկսվում է հեղեղը և ջուրը բարձրանալով՝ գալիս է տաւարները քշում և տանում մեծ ջրի հետ խառնում. այսպէս անհետացել են երեսուն գլուխ կով և եզ: Ինչպէս լսում ենք, մեզնից աւելի մեծ վնաս է հասել մեր հարևան՝ Շնող և Արճիս գիւղերի ցանքսերին. այնտեղ էլ հեղեղը բաւականաչափ տաւար է քշել:

—

Ջիվանշիրի գաւառի ՄԱՂԱՎՈՒԶ գիւղից մեզ գրում են. «Մայիսի 20-ին մեր գիւղում մի շատ ցաւալի դէպք պատահեց: Երկու երիտասարդ գիւղացի, Արշակ և Արսէն անունով, գութանով վար անելու ժամանակ կռւում են: Արշակն ասում է—տափն իմն է, մաճը ես պիտի բռնեմ, որ լաւ վարեմ, իսկ Արսէնը պնդում է—գութանն իմն է, մաճը ես եմ ուզում բռնել, որ զգուշութեամբ վարելով՝ չը կտրեմ: Այս չնչին պատճառից կռիւ է ծագում, որի ժամանակ Արշակը սաստիկ ծեծում է Արսէնին. սա էլ վազում, շորերի մօտ թողած դաշոյնը վերցնում է, որ պաշտպանվի, բայց Արշակը կրկին աշխատում է յաղթող հանդիսանալ: Այդ միջոցին յուսահատված Արսէնը դաշոյնով հարուած է հասցնում Արշակի փորին, դուրս թափելով նրա փորոտիքը: Միւս օրը Արշակը վախճանվեց:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՆՖԷՐԷՆՑԻԱՆ

—

Մեծ տպաւորութիւն գործեց գերմանական պրոֆէսոր Յօրնի յայտարարութիւնը: Եւ ճշմարիտ. խաղաղութեան կոնֆէրէնցիայի երեք յանձնաժողովներից միմիայն երրորդը, այսինքն նա, որ քննում էր միջնորդ դատարանի հարցը, աջող և դրական հետևանքներ էր խոստանում, և յանկարծ վեր է կենում գերմանական պատուիրակը և յայտարարում է, որ ինքն միջնորդ դատարանը չի ընդունի: Յօրն իր անունից չէր խօսում, որովհետև ուղղակի սկսեց այն քանից, թէ իր յայտարարութիւնը անում է հէնց նոր ստացած հրահանգների հիման վրա: Այդ աւելի փչացրեց գործը և մեծ յուզմունք առաջ բերեց:

Յօրն յայտնեց, թէ ինքն լիազօրութիւն ունի հաղորդելու, որ գերմանական կառավարութիւնը չէ կարող սկզբունքով ընդունել անգլիական պատուիրակ Գուանսէֆօտի ծրագրի մէջ մատնացոյց արված մշտական միջնորդ դատարանը: Գերմանիան հանդէս է գալիս՝ առարկելով, նախ՝ հէնց բուն սկզբունքի դէմ, երկրորդ՝ նրա իրագործման դէմ: Մշտական միջնորդ դատարանի հիմնարկութիւնը վնաս է հասցնում միապետի գերիշխանութեան և ժողովրդի անկախութեան: Միջնորդ դատարանը, որին երկու պետութիւնները դիմում են մի խիստ որոշ դէպքի լուծման համար, բոլորովին այն չէ, ինչ որ այն միջնորդ դատարանը, որը կապում է ժողովրդի ձեռքերը ապագայի համար, երբ կարող են տեղի ունենալ այժմ անյայտ անցքերը: Թագաւորը, որ ստացել է իշխանութիւնը Աստուծու շնորհով, ոչ մի բոպէ չէ կարող հրաժարվել իր բարձրագոյն իրաւունքների ամենաէական մասից, այն է՝ կրիտիքական բոպէում ժողովրդի վիճակը ղեկավարելու իրաւունքից: Գերմանական կայսրը պարտաւորութիւն չէ յանձն առնում ենթարկվելու այն դատաւորների վճռին, որոնց ինքը չէ նշանակել, և մանաւանդ այնպիսի դէպքերի առիթով, որոնք դեռ չեն տեղի ունեցել:

Դրանք են բուն առարկութիւնները: Ինչ վերաբերում է միջնորդ դատարանի իրագործման գաղափարին, Յօրնի խօսքով, շատ հեշտ է նշանակել մի մշտական միջնորդ դատաւոր, բայց անհնարին է նախատեսել, թէ նա ինչ ընթացք կը բռնի:

«Daily News» լրագրի Հաագայի թղթակիցը հաղորդելով այդ մանրամասնութիւնները, աւելացնում է, որ պրոֆէսոր Յօրն աւարտեց իր ճառը յանձնաժողովի խորին լռութեան մէջ: Յանձնաժողովը բաղկացած էր 12 պատուիրակներից, որոնցից երեքը դեսպաններ էին:

Փոքր, գլխաւորապէս կենտրոնական պետութիւնների պատուիրակները երկիւղ են յայտնում այն բանի առիթով, որ կոնֆէրէնցիան ընդունեց միջնորդութեան վերաբերեալ առաջարկութիւնը, որովհետև նրանք վախենում են, որ դա միջոց կը տայ մեծ պետութիւններին նրանց վրա ճնշում գործ դնել իրանց մէջ եղած որ և է տարաձայնութեան դէպքում, և կը ստիպեն նրանց դիմել միջամտութեանը, որը, ի հարկէ, կը սահմանափակէ նրանց գործունէութեան ազատութիւնը և անկախութիւնը:

Թիւրքաց պատուիրակը յայտնեց Նիդերլանդեան արտաքին գործերի մինիստրին, որ կը հեռանայ Հաագայից և չի մասնակցի կոնֆէրէնցիայի զրաղմունքներին, եթէ հայ ազիտատոր Մինաս Չէրազին թոյլ կը տրվի շարունակելու իր ազիտացիան Հօլանդիայում: Դեռ ևս պատասխան չէ ստացվել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պօրտուգալիայի թագուհին, ծանօթանալով տուբէրկուլօզի դէմ կռուելու համար Բերլինում կազմված կոնգրէսի աշխատութիւնների հետ, մեծ ժողով հրաւիրեց տուբերկուլօզի առաջն առնելու նպատակով միջոցներ ձեռք առնելու համար: Ժողովին ներկայ էին՝ թագաւորական ընտանիքի անդամները, պալատականները, բարձր հասարակութիւնը և Լիսաբոնի նշանաւոր բժիշկները: Ընտրվեցին երեք յանձնաժողովներ՝ վարչական, տեխնիական և պրոպագանդայի յանձնաժողով: Ներկայ եղողները մեծ գումար ժողովեցին: «Lok. Anz.» լրագրի ասելով, «միայն թագուհի Ամալիան 20 միլիոն ռէյս ստորագրեց»:

—«Moncey» թատրոնում միտինգ կազմվեց ի պատիւ Զօլայի: Միտինգը կռւով վերջացաւ. Զօլայի տան առաջ թեր և դէմ ցոյցեր եղան: Մերձակայ հիւրանոցի ապակիները ջարդվեցին: Կալանաւորվեցին մի քանի անձինք:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

8 յունիսի

ԽԱՐԱՐՕՎՍԿ: Հաղորդում են, որ մինիսներների վրա գործ դրած բռնութիւնների առիթով, Չինաստանը համաձայնվել է վճարել Ֆրանսիային 1,200,000 տաէլ:

ՊԱՐԻԶ: Շատ հաւանական է, որ Վալդէկ յանձն առնի մինիստրների խորհրդի նախագահութիւնը և զինուորական մինիստրութեան պորտֆէյլը, Գալիֆէի հետ, որը կը ստանձնէ գլխաւոր շտաբի կառավարչի պաշտօնը: Կաբինետի կազմակերպութիւնը կը լինի հետևեալը. Գուանկարէ—ներքին գործերի մինիստր, Մոնիս—արդարադատութեան, Դէլկասէ—արտաքին գործերի, Լանէսան—ծովային, Լէյգ—ժողովրդական լուսաւորութեան, Դէլօմբր—ֆինանսների, Գիլլէն—կոլոնիաների, Ժան-Դիւպիւի—երկրաբութեան, Բուրժէ—առևտրական: Մնում է ստանալ Կրանցի համաձայնութիւնը՝ ընդունել հասարակական աշխատանքների պորտֆէյլը: Միայն դա է պատճառը, որ յետաձգվում է մինիստրութեան կազմակերպութիւնը:

ՊԱՐԻԶ: Վալդէկ-Ռուսօ կէս օրից յետոյ խորհրդակցութիւն ունեցաւ Լէյգի, Գուանկարէի, Դէլամբրի, Գիլլէնի և Դելկասէի հետ: Կարծում են, որ ապագայ մինիստրները կը դուսարվեն երեկոյեան Ռուսօի մօտ:

ՊԱՐԻԶ: Վալդէկ-Ռուսօ հաղորդեց Լուբէին, որ ինքն, դժբաղդաբար, պէտք է մերժէ մինիստրութիւնը կազմակերպելու յանձնարարութիւնը, որովհետև չէ կարողանում համաձայնութիւն կայացնել իր բոլոր ընկերների հետ:

ՄԱԴՐԻԴ: Պատգամաւորների ժողովը ընդունեց Կարօլինեան, Պալաօս և Մարիանեան կղզիները Գերմանիային զիջելու վերաբերեալ դաշնագիրը:

ՎԻԵՆՆԱ: Լրագիրները հաղորդում են, որ թեթև ոսկրացաւը, որով կայսրը տանջվում է մրսելու պատճառով, շատ աննշան է և կայսրը առողջանում է:

«Polit. Corr.» լրագիրը հաղորդում է, որ յունիսի 16-ից հանգստութիւնը չէ խախտվել սերբ-թիւրքական սահմանի վրա: Սերբիական մինիստր-նախագահը, որը նորերս տեղի ունեցած անցքերի պատճառով աւելի երկար մնաց Վիէննայում, այսօր ճանապարհ է ընկնում դէպի Մարիէնբադ:

ԲԵՐԼԻՆ: Լէյլստագ: Անգլիայի հետ ժամանակաւոր առևտրական համաձայնութեան երբորդ ընթերցանութեան ժամանակ, Լիբէրման և Զոննէնբերգ յարձակվում են Անգլիայի գործունէութեան ընթացքի վրա Սամոայում: Պետական քարտուղար Բիւլով բացատրում է, որ Գերմանիան կանգնած է սամօական դաշնագրի հիմքի վրա, որ պահանջում է միաձայնութիւն վճիռների մէջ: Ծայրագոյն յանձնաժողովը Սամօա եկաւ մայիսի 13-ին և ժամանակաւորապէս յանձն առաւ կառավարչական բարձրագոյն իշխանութիւն: Մալիէտսա, Տանու և Մատաաֆա այցելեցին յանձնաժողովը և խոնարհութեամբ խոստացան զինաթափ լինել: Մատաաֆան յանձնեց արդէն 1800 զէնքեր: Հնարաւոր է հարցը վճռել և թագաւորական իշխանութիւնը վերացնելու միջոցով: Կալանաւորված գերմանացիները անմեղ ճանաչվեցին և բանտից արձակվեցին: Յանձնաժողովին յանձնարարված է վերականգնել խաղաղութիւնը և կարգը սամօական դաշնագրի համաձայն, որը պահանջում է ուշադրութեան առնել տեղացիների ցանկութիւնները: Գերմանական հպատակներին վարձատրելու հարցը կարող է վճռվել հանգստութիւնը վերականգնելուց յետոյ միայն: Մինիստրը յոյս է դնում յանձնաժողովի արդար վճռի վրա, մի և նոյն ժամանակ Գերմանիան, յետ չը կանգնելով իր իրաւունքներից, գործում է հանգիստ մտախոհութեամբ: Կայսերական սէյմը սկսեց ապա քննել գործարանական բանւորների պաշտպանութեան վերաբերեալ օրինագիծը: Կայսերական կանցլէրն ապացուցանում է, որ նախագիծը ոչինչ նոր և անսպասելի բան չէ պարունակում: Եթէ սոցիալիստները այդ օրէնքի հետևանքները վնասակար են համարում իրանց շահերի համար, դա հասկանալի է: Անհասկանալի կը լինի, սակայն, եթէ ուրիշ կուսակցութիւնները սկսեն վիճել այդ օրէնքի դէմ: Բանւորների դաշնակցութեան իրաւունքը չի սահմանափակվի, գործադուլները կարող են լինել, բայց օրէնքը պէտք է սահման դնէ պրոֆէսիոնալ դրդիչների և ագիտատորների գործունէութեան սարսափներին: Գահական ճառի մէջ այն միտքն է յայտնված, որ օրէնքը պէտք է առաջարկվի նրա համար ևս, որպէս զի կարելի լինի ջրել արուեստական կերպով տարածված երկիւղները: Կանցլէրը յոյս ունի, որ օրէնքը կիրագործվի յօգուտ բանւորների այժմ կամ աւելի ուշ: Պոսադովսկի աւելացնում է կայսերական կանցլէրի ճառին, թէ այն կարծիքը, որ իբր թէ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի ձևի համար թողնել բանւորներին դաշնակցութիւնների իրաւունքը, այլ իսկապէս կամենում է խլել այդ իրաւունքը,—սխալ է: Նախագիծը ի նկատի ունի միայն անձնաւորութեան զօրեղ պաշտպանութիւնը: Սոցիալիստները կամենում են գործադրել ստիպողական միջոցներ և սպառնալիք, բայց ստիպողական միջոցները միմիայն պետութեան ձեռքն են դնվում, որը չը պէտք է սուրը ձեռքից թողնէ: Նախագիծը շատ հեռու չէ գնում: Սոցիալ-դեմոկրատիան,—շարունակում է կանցլէրը,—մի պետութիւն է պետութեան մէջ: Նրա դէմ կռուելու համար մենք մեր յոյսը դնում ենք արի քաղաքացիների վրա: Բէբէլ բացառական օրէնք է անուանում նախագիծը: Օրէնքը կը փոփոխվի կրկնակ եղանակով: Հռետորը բանւորին խիստ պատժելու օրինակներ է բերում այժմ գոյութիւն ունեցող օրէնքների ժամանակ: («Թուն» աղաղակներ ձախակողմը): Բալէստրէմ ոչ պարլամենտական է անուանում այդ բացականչութիւնները: Վիճաբանութիւնների շարունակութիւնը յետաձգված է մինչև վաղը:

ԼՕՆԴՕՆ: Հնկոնգի նահանգապետը հաղորդում է, որ այնտեղ վերջին չաբաթվայ ընթացքում ժանտախտով հիւանդանալու 109 նոր դէպքեր կային և 117 մահվան դէպքեր:

ՎՕՐՕՆԵԺ: Ցանքսերի դրութիւնը նահանգի հիւսիսային գաւառներում, շատ սակաւ բացառութեամբ, գոհացուցիչ է, իսկ հարաւային գաւառների շատ տեղերում ցանքսերի դրութիւնը համարեա անյուսալի է: Վալուի զէմստվոն արտակարգ ժողով է գումարում գիւղացիների աշնանացանի համար սերմացուների հարցը քննելու: Բիրիւչի զէմստվոն անհրաժեշտ է համարում սերմացու և ձմեռվայ համար պաշար:

ՍԱՄԱՐԱ: Մինչև յունիսի 1-ը հունձի վիճակը բոլոր գաւառներում յուսատու է: Շոքերից սաստիկ վնասվեցին արտերը: Բուզուլուկի գաւառում խոտ չը կայ, մնացածներում շատ վատ են: Հացի գինը բարձրանում է:

ԿԱԼԻՇ: Կալիշի նահանգի բոլոր կաթոլիկ եկեղեցիներում կարդացվեց Բէրենեվիչ եպիսկոպոսի այն նամակը, որով հրաւիրում է իր հօտին օգնութիւն հասցնել Կայսրութեան ներքին նահանգներում սովալ դժբաղդ եղբայրներին: Նամակը կարդալուց յետոյ քահանաները եկեղեցիներում բաւական խոշոր գումարներ ժողովեցին:

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ: Երէկ, առաւօտեան ժամի 9-ին, Մեծ Իշխանը ժամանեց Տաւաստգուս: Կայարանում դիմաւորեցին Մեծ Իշխանին նահանգապետը, կամենդանտը, զինուորական վարչութեան առանձին մասերի գլխաւոր հրամանատարները և նահանգական վարչութեան ծառայողները: Ընդունելով ֆինլանդական 2 հրացանաձիգ գնդից պատուաւոր պահակ, Մեծ Իշխանը մեկնեց դէպի զինուորական եկե-

ղեցին, որտեղ մնաց մինչև ժամերգութեան վերջանալը, և ապա գնաց նոր կառուցանվող զինուորական եկեղեցին, որտեղ Նորին Բարձրութեան ներկայացրին եկեղեցու յատակագիծը և մատուցին աղ ու հաց։ Ռուսաց ժողովրդական դպրոցում լսեց աշակերտուհիներից և աշակերտներից միացեալ խմբի երգը, որից յետոյ Նորին Բարձրութիւնը ներկայ էր զօրախաղին. մանրամասն զննեց զօրանոցները, բնակարանները և փորձեց զինուորների կերակուրը, որը գտաւ բաւարար։ Յետոյ Մեծ Իշխանը ահագին բազմութեան միջով անցաւ և գնաց քաղաքային այգին, որտեղ տեղային վարչութեան և բերդապահ զօրքի ծառայողների կողմից Նորին Բարձրութեանը նախաճաշիկ տրվեց, որի ժամանակ նուագում էր ֆին և ռուսաց միացեալ խումբը։ Դէպի Աբօ մեկնելը կայացաւ ժամի 5-ին, կէսօրից յետոյ։

8 յունիսի

ԱԲՕ։ Մեծ Իշխանը երեկոյեան 10 ժամին ժամանեց։ Կայարանին մօտ գտնվող հրապարակը զարդարված է դրօշակներով և լցված է ժողովրդով, որը ողջունում էր գնացքը «ուրայի» բացականչութիւններով։ Մեծ Իշխանը 5½ ժամին ճանապարհ ընկաւ Տամմէրֆօրս։

ՊԱՐԻԶ։ Արմատական լրագիրները բացարձակապէս մեղադրում են Մէլլինին այն բանում, որ նա ազդեց Դէլօմբրի, Գիլլէնի և Կրանցի վրա, որպէս զի Վալդէկ-Ռուսսոի կօմբինացիան չաջողվի, որովհետև նա այդ կօմբինացիան շատ նպաստաւոր էր համարում վերաքննութեան կողմնակիցների համար։ Սօցիալիստները Մէլլինի վարմունքը «կատարելապէս դաւաճանութիւն» են անուանում։ Լրագիրների մեծամասնութիւնը կարծում է, որ Պուանկարէ կրկին կը կանչվի Ելիսեան պալատը։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագրին հեռագրում են Շանգհայից, որ իտալական դեսպանը ճանապարհ ընկաւ Պէկին։ Այս անգամ նրա միսսիան էութեամբ խաղաղասիրական է և, ըստ երևոյթին, նպատակ ունի ոչ թէ հողային, այլ առևտրական զիջումներ։

ԲԵՐԼԻՆ։ Կայսերական սէյմին ներկայացրված է Սպանիայից Կարոլինեան, Մարիանեան և Պալաոս կղզիները ձեռք բերելու առաջարկութիւնը։

ԲԵԼԳՐԱԴ։ Սահմանի վրա հանգստութիւն է տիրում։ Նոր ներս խուժումներ չեն եղել։ Սերբական կօմիսարը գնաց սահմանը և հանդիպեց այնտեղ Թիւրք կօմիսարի հետ, որի հետ կը սկսի սկզբնական քննութիւն կատարել։

ՊԱՐԻԶ։ Լուր է պատում, որ Լուբէ մտադրութիւն ունի Բուրժուային առաջարկել մինիստրութեան կազմակերպութիւնը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ
Յունիսի 8-ին

Մուրհակների ընթացքը

Երեք ամսով	Լօնդօնի վրա	10 ֆունտ	94
„ „	Բերլինի վրա	100 մարկ	45,80
„ „	Պարիզի վրա	100 ֆրանկ	37,27⅝
Չեկը	Լօնդօնի վրա	10 ֆունտ	94,65
„	Բերլինի վրա	100 մարկ	46,30
„	Պարիզի վրա	100 ֆրանկ	37,57⅝
Բօրսային դիսկօնտ			6—7½
4% պետական ընկնտա			100⅜
4% ազն. կալ. բանկի դրամ. թղթ.			98⅞
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի			98⅞
5% վերջակ. տոմս. առաջին ներքին փոխ.			288½
5% „ „ երկրորդ „ „			254
5% „ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.			209½
5% ոսկու բենատա			
5% գրաւ. թղթ. փոխ. հող. վարկի ընկ.			180
4½% ներքին երկաթուղ. փոխ.	1890		100¼
Նոյնը	1892		100½
5% Թիֆլիսի վարկի ընկերը			99
4½% Թիֆլիսի կալուած. բանկի			
6% Ռուբլայիսի կալուած. բանկի			
5% „ „ „			
Ակցիաներ Ռուս. առևտր.-արդիւն. ընկ.			340
„ Երզ. նաֆթի նաւթ. ընկերը.			660
„ Կասպկական ընկ.			668
„ Բագուայ նաւթ. ընկ.			876

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

№ 1 գնացքը։		№ 3 գնացքը։	
Բագուից դուրս է գալիս ցերեկ.	4 ժ. 15 ր.	գիշ.	12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 ժ. 40 „	երեկ.	6 „ 38 „
Թիֆլ. դուրս է գալիս „	9 „ 10 „	երեկ.	7 „ 37 „
Բաթում է հասնում երեկ.	8 „ 32 „	առ.	8 „ 12 „
№ 2 գնացքը։		**№ 4 գնացքը։**	
Բաթումից դուրս է գալիս առ.	9 ժ. 15 ր.	երեկ.	9 ժ. 05 ր.
Թիֆլիս է հասնում երեկ.	8 ժ. 53 „	առ.	9 „ 45 „
Թիֆլիսից դուրս է գալիս „	9 „ 23 „	„	11 „ 32 „
Բագու է հասնում ցերեկ.	1 „ 04 „	„	6 „ 15 „

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Էնդ հոգու համար

Թիֆլիսից դուրս է գալիս 7 ժ. առ.	9 ժամ. առ.
Գիշերում է Մլեռում	Պասանաուր
Վլադիկավկազ հասնում է 7 ժ. 20 ր. երբ.	9 ժ. 20 ր. երբ.
Վերջ հոգու համար (չեն գիշերում)	
Թիֆլիսից դուրս է գալիս 1 ժ. ցերեկ.	7 ժ. երեկ
Վլադիկավկազ հասնում է 3 „ 25 ր. երբ.	9 ժ. 50 ր. երբ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միզասեռական հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԵ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հեռադիտակներ է առում մէջը, խիստ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
137—151 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Ծախվում է Գրաֆսկայա փողոցում, «Նարմանկայի» մօտ, աւագ քահանայ Էլիսօվի ԵՐԿՇԱՐԿԱՆԻ տունը, № 10։ Տան վրա բանկի պորտք կայ մօտ 14 հազար րուբլի։ Պայմանների մասին դիմել նոյն տան մէջ, Էրէտօվի խանութը։ (հ. չ.) 1—2

Մ. ՄՈՒՐՏԱԳ
Ամառը մնում է Թիֆլիսում և ընդունում է աշակերտներ ԱՆԳԼԻՍԵՐԷՆ ԴԱՍԵՐ տալու։ Դասերը աւանդվում են նոր՝ ռուսական, ֆրանսիական և գերմանական մեթոդներով։ Զորս, հինգ և շատ աշակերտներ միասին կարող են դասեր առնել աւելի էժան։ Սովորեցնում է լաւ արտասանութիւն և շատ շուտ։ Կարելի է տեսնել ամեն օր ժամի 12-ին։ Հասցէն Մաղաթովսկայա փողոց, տուն Մարտիրոսովի։ Արժանացել է մեծ գովասանքների։ 2—5

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1899 Թ. ԼՈՒՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	Ր.	Կ.
ԶԷՍՍԻԿԱՑԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ, թարգ. Գ. Գուշչանի	—	20
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՑԻՆ, Հաուֆի. թարգմ. Շ. Տ.—Ն.	—	5
ՀՐԷԱՑ ԱՐՆԷՐԸ, Հաուֆի. թարգմ. Շ. Տ.—Ն.	—	3
ՍԷԲԷՈՍԻ ՊԱՏՄ. և Մ. Խորենացի, Սամ. Մալխասեանցի	—	40

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ Tiflis, (Russie), Société de la publication des livres Arméniens.
9—10

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ
Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Միքայէլեան փողոց, տ. № 93. տելէֆոն № 506։ (հ.) 22—45

ԲԺԻՇԿ ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Մոսկվայից)
Նախընթաց տարիների պէս կընդունէ հիւանդներին Կովկասի հանքային ջրերում—Պեատիգօրսկում, մայիսի 8-ից։
(հ. չ.) 8—10

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը։
Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31։
(Ե. հ. չ.) 40—100

Լոյս տեսաւ
և վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
ԴՐԻԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
գիրք Դ.
ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ցաւելուածներով, ծանօթութիւններով, պատկերներով։
ԱՇԽԱՏ. ԳԻՒՏ ա. քահ. ԱՂԱՆԵԱՆՑ
ԳԻՆՆ Է 4 ՐՈՒԲԼԻ
Նոյնտեղ վաճառվում են «Դրիանի» Ա.—Բ. գիրքը. գինն է 2 ր. և Գ. գիրքը, գինն է 7 ր.
ՊԱՐՈՆԵԱՆ. Ծիծաղ, հեղինակի պատկերով, գինը 1 ր. 25 կոպէկ։
„ Արևելեան ատամնաբոյժ, „ — 50 „
(հ.) 1—5

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԳԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ
ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ
Սկսել է իր գործունէութիւնը,
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ՝
ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաֆթ քաշելու համար՝ շոգէկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարիւրաւոր գործիքներ։
Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի-Հէյբաթում։
Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տելէֆոն № 749), գործարանի տելէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տելէֆոն № 451. (Ե. հ. չ)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 9/21 յունիսի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Թօչափարուխովի և Մայսուրաձէ քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին Կօլուբիակինսկայա հրապարակ։ ՆՕՎՈՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելխիոր Հերշենրօդերին։
(Ե. հ. չ.) 4—20

Վաճառվում է, Մոսկվայում տպված,
„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ առաջին հատորը, չորրորդ տպագրութեամբ, բաղկացած 402 մեծադիր երեսներից, 300-ից աւելի գործածական երգերով, բանաստեղծութիւններով և երգերին վերաբերեալ արձակ գրուածքներով։ Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ր., ներով և երգերին վերաբերեալ արձակ գրուածքներով։ Ճանապարհածախքով—1 ր. 20 կ.։ 10 օրինակ գիրք պահանջողը ճանապարհածախք չէ վճարում։ Յանկացողները, յայտնելով իրանց ճիշտ հասցէն՝ դիմում են Բագու, «Սոխակի» հրատարակիչ Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանցին, սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, въ Баку.
(ռ. չ. ե.) 9—10



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ
ԳԱԶՕ-ՇՈԳԻՒ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրոտէխնիական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռադիրների, տելէֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱՆ ԲԻՒՐՕ
Ինժեներ Ն. Բ. Պասաէկի
Тифлисъ, Михайловская ул. №
Հասցէն հեռադիրների համար. Тифлисъ—Пассеку.
ՏԵԼԷՖՕՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԻԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ
ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
տիւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։
ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ։
ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. հ. չ.) 10—100

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Іюня 1899 г.
Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27.